

ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиси, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզովով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Աննա Սիմէոնեան, Մնացական (Բախչօ), Յովհաննէս, Յակոբ, Տիգրան, Միքայէլ և Արմենակ խանութները և ծանօթները, Սօֆիա Գէորգեան և Արշակ Մարգարեան Աւարեանց-
ները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինը իր
անմոռանալի ամուսին, երկրորդները իրանց հօր, իսկ վերջինս իր սիրելի աներոջ

ԳԻՐՈՐԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԽԱՆԳԱՆԵԶԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 14-ին, երեկոյան ժամը 6-ին: Խնդրում են շնորհ
բերել հանգուցեալի յուղարկութեանը, որ լինելու է ամսիս 17-ին, հինգշաբթի
օրը, իր բնակարանից (Կոչուբեցկի փողոց № 27) դէպի Թանգոյեան ս. Աստուա-
ծածին եկեղեցին, այնտեղից էլ Խօջիվանքի գերեզմանատունը: Ամբիժը չորեքշաբթի
օրը, ամսիս 16-ին, երեկոյան 7½ ժամին: (Հ.)

գանվող մի կետում: Եւպոնական զօրքե-
րի գլխաւոր հրամանատարն է Նոգոլու:
Պատերազմական բեմի ամենատալան-
դէզ և նշանաւոր դէպքերից մէկն է
Պօրտ-Արտուրի ուսուցչի նաւատորմի ծով
զորքի գլուխ: Այդ մասին միաժամանակ
յայտնում են թէ փոխարքայ Ալիքսէնդր
և թէ ծովապետ Տօգօի հեռագրիները:
Դեռ չը կան ստույգ լուրեր թէ ինչ տե-
սակ ընդհարումներ են տեղի ունեցել
պատերազմող կողմերի նաւատորմերի մի-
ջև և թէ ինչ ընթացք կարող է ստանալ
ուսուցչի նաւատորմի ներքոյ ծանակաւ քայլը
առաջիկայում:

տարզէտ հասարակութեան բոլոր դասակարգե-
րին առանց կրօնի և ազգութեան խտրութեան:
Ընդհանուր ժողովը տուեց իր համաձայնու-
թիւնը:

Միւս կարեւոր խնդիրը որբանոց բանալու
հարցն է, որը նոյնպէս յայտնի է հասարակու-
թեանը և «Մշակի» ընթերցողներին թէ ընկե-
րութեան տեղեկագրից և թէ պ. Հ. Առաքե-
լեանի վերջի յօդուածներէն:

Դժուար թէ կարելի լինի մի նոր խօսք ա-
սել այդ աւելի քան կարեւոր և անհրաժեշտ
հիմնարկութեան մասին, որի կարիքը վարչու-
ն է, որ զգացվում էր: Այդ խնդիրը արդէն նա-
խապէս յայտնի էր ընդհանուր ժողովին: Վար-
չութիւնը, ի նկատի ունենալով իր միջոցների
սղութիւնը, նպատակադարձ է համարում
առ այժմ յետաձգել պ. Տէր-Օհանեանի կազ-
մած յատակագծով (մօտ 17,000 ռ. ծախք՝ 48
երեխայի համար) և պ. Արեւիկայի յատակա-
գծով (մօտ 12,000 ռ.) 40 երեխայի համար)
գործ սկսելը և յարմար է գտնում Աշխատան-
քի Տան բակում պ. Լ. Մերգէլեանի շինած մի
յարկանի ձիւ բնակարանները վրա մի յարկ
էլ աւելացնել, որը կը նստի մօտ 3—4000 ռ.
և որը ապագայում կարելի է աւելի ընդար-
ձակել: Բացի այդ, հարկաւոր է շինել բաղնիս
և փուռ, որոնք նոյնքան ծախք են պահանջում.
այնպէս որ վարչութիւնը խնդրում է ընդհա-
նուր ժողովից իրաւունք տալ մօտ 10,000 ռ.
վարկ բանալ այդ գործերը սկսելու համար:
Ընդհանուր ժողովը որոշեց այդ խնդիրը յանձ-
նել վարչութեանը, որը մասնագէտների խոր-
հրդով և ցուցմունքներով պէտք է սկսէ գործը
կանոնաւոր հիմքերի վրա:

Խօսք եղաւ և Աշխատանքի Տան մասին: Եւս-
տատանքագործը, որովորեալ ժամանակաւոր գործ
են գտնում ժամանակաւորապէս աշխատանքից
զրկվածները, ֆլամանք են տալիս (նիւթական),
իսկ այնտեղ աշխատողները կանոնաւորապէս
ոչ մի արհեստ չեն իւրացնում: Այդ խնդիրը
աւելի քան լուրջ խնդիր է և նրա մասին կը
խօսենք աւելի յարմար ժամանակ, մասնա-
ւանդ, որ ընդհանուր ժողովը յանձնեց վար-
չութիւնը:

Պիւնայ. 1730 թ. Լհասայում մօտ քսան տա-
րի ապրել է մի իրթված հօլանդացի, որը
տարաբաղադար ոչ մի գրաւոր տեղեկութիւն
չէ թողել թէ մայրաքաղաքի և թէ երկրի
վերաբերմամբ, իսկ ինչ վերաբերվում է 19-դ
դարին, գլխաւորապէս Տիբէտում, մասնաւորա-
պէս և Լհասայում, երեք եւրօպացի են միայն
եղել: 1821 թ. անգլիական բժիշկ Միլինգիլին
աշխուղեց այցելել Դալայ-Լամայի մայրաքաղաքը
շնորհիւ այն նպատակով հանգամանքի, որ նա
բժշկութեամբ էր պարագլուխ չինական զենե-
րալի սահմաններում, որը և վերջեցեց նրան իր
հետ: 1846 թ. Հարօ և Հիւզ միտիոնէրները,
բուդդայականութեան կենտրոնում քրիստո-
նէութիւն տարածելու երկրորդ փորձն անելու
նպատակով, Լհասայ մօտ մօտգօլական ուխ-
տաւորների հետ, բայց ամիս ու կէս մնալուց
յետոյ չինական զեպանի պահանջով ստիպ-
վեցան հեռանալ երկրից, չը կարողանալով
տեսնել Դալայ-Լամային: Այս վերջիններից
յետոյ ոչ մի եւրօպացու չէ աշխուղել Լհասայ
մօտին, թէ և փորձեր եղել են:

Հետաքրքրական է եւրօպացի ճանապար-
հորդների ձեռնարկութեան, այսպէս ասած,
ցերեմօնաւոր. հէնց որ ճանապարհորդները պա-
տահում են տեղական վարչութեան հետ, նը-
րանց առաջարկում են սպասել, մինչև որ Լը-
հասայից կը ստացվի Դալայ-Լամայի օրհ-
նութիւնը, «որի համար սուրհանդակ է ու-
ղարկված»: Օրհնութիւնը, իբրեւ, ստացվում է,
բայց երկրի սահմանից անմիջապէս հեռանա-
լու ամենաքաղաքավարի ձեռով Այսպիսի ձևով
էին հեռացվել Տիբէտի սահմանից Օրլանդան
դուքսը, Բօնվալօ, Պրօփիլալի և մօտ ժամա-
նակներս Սվէն-Հելդին յայտնի ճանապարհորդ-
ները: Սակայն անհրաժեշտ է ասել, որ ար-
գելքը յատկապէս սահմանված է եւրօպացի-
ների համար. ասիացիները ազատ մուտք ունեն:
(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ
(Նամակ Բագուից)

Ամսիս 12-ին, բաղադրային տանը կայացաւ
Բագուի հայոց Մարգարեական ընկերութեան
երկրորդ անգամ նշանակված ընդհանուր ժո-
ղովը: Ժողովի զբաղմունքների առարկաներից
մէկն էր կառավարութեան կարգադրութեամբ
փակված ընկերութեան գրադարան-ընթերցա-
րանի գոյքի խնդիրը: Ինչպէս յայտնի է
«Մշակի» ընթերցողներին, ընկերութեան վար-
չութեան ղեկավար երկրի պ. կառավարչապե-
տին թոյլ տալ նորից բանալ գրադարան-ըն-
թերցարանը, անաղարկութեան հանդիպեց այն
հիման վրա, որ ընկերութեան կանոնադրու-
թեան մէջ չը կայ գրադարան-ընթերցարան
բանալու իրաւունք սուրբ կէտ: Ի նկատի ու-
նենալով այդ անու. մասն. Եւստատանքագործը
կու՛մ է ընդհանուր ժողովին որոշել՝ ղեկի
ներքին գործերի պ. միջնորդին, խնդրելով
աւելացնել ընկերութեան կանոնադրութեան
մէջ գրադարան-ընթերցարան բանալու իրա-
ւունքը, ի նկատի առնելով և այն հանգաման-
քը, թէ ինչպիսի մեծ և անփութարիւնի օգուտ
էր տալիս այդ հիմնարկութիւնը Բագուի խայ-
րունի լեռնաշղթաների երկար, միաձև հողապատ-
նէշներից է կազմված, որոնք իրանցից աւելի
բարձր լեռնաշղթաների մնացորդն են ներկա-
յացնում և որոնց բարձրագոյն մասերը ժա-
մանակը կործանել և կից հարթութիւններն է
նետել:

Առանձին լեռնաշղթաների մէջ ընկած են
ճահճային ձորեր կամ անապատներ, որոնց
վրա ցրված են աղի լճեր, ձիւնի մշտական
փոթորիկներով, հեղեղներով և փռալի բամբի-
ներով: Այդ ձորերի ամենաստոր տեղերի
բարձրութիւնը Ալպան լեռների բարձրու-
թեանն է հաւասար, այսինքն աւելի քան
4000 մէտր: Լեռնային այս անապատներում
մարդ ամբողջ ամիսների ընթացքում կենդանի
էակի չէ կարող հանդիպել, և զարմանալի չէ,
որ Տիբէտի սահմանները մտնող ճանապար-
հորդները դժոխային տանջանքներ են կրում
կու՛մով վայրենի բնութեան հետ:

Տիբէտի բարձրաւանդակի հարաւի և հարաւ-
արեւելքի լայն ձորով հոսում է Սանգ-Պօ երկրի
գլխաւոր գետը, որը դեռ լաւ չէ հետազօտված.
Հիմալայների միջից անցնելով, նա մտնում
է Հնդկաստան Բրամապուտրա անունով: Լհա-
սայ, Դալայ-Լամայի մայրաքաղաքը, այդ գե-
տի Կուչլու անունով հիւսիսային վտակի
(притока) և նրա գետաբերանից քիչ բարձր
է գտնվում, 3630 մետր բարձրութեան վրա.
(Եւրօպայում այդ տեսակ բարձրութիւնների
վրա յաւիտենական սառույց է լինում):

Եւրօպային Լհասայն վաղուց էր յայտնի:
Մօտաւորապէս 1330 թուին այդ քաղաքը այ-
ցիկից մի ոմն Օտօրիօ Պօրտնիտէն: Երեքհա-
րիւր տարի յետոյ, 1630 թուականին, Հրու-
բեր և Դօրվիլ եղութիւնները նոյնպէս եղել են
Լհասայում. տանտութեամբ դարձ երե-
րորդ կէտում խորհրդաւոր քաղաքը յաճախե-
լ են շատ միաբնակները, սակայն նրանցից եր-
կար ապրողը մէկն է եղել—Հօրացի—Դիլա-

երկրորդ գորաբանակի վրա, որ գտնվում է
Օկուի հրամանատարութեան տակ: Օրէջօր
աւելանում են ուսուցչի պատերազմական և
այն ոյժերը, որոնք պէտք է կուեն եւ-
պոնական առաջին գորաբանակի դէմ, որ
գտնվում է Կուրօկիի հրամանատարութեան
տակ: Ռուսները դիտաւորութիւն ունեն
կղզիացնել Կուրօկիի գործը Օկուի գործից
և այդ պատճառով կենտրոնացրել են Կու-
րօկիի գործի թեւերը դէմ ուժեղ թնդա-
նօթածից գործ: Ընդհարումներ սպասվում
են շատ մօտ ժամանակում:

Լօնդօնի աղբիւրներից ստացված տե-
ղեկութիւնները ցոյց են տալիս, որ Պայ-
չէնում կան արդէն երկու ուսուցչական գո-
րաբաժիններ և բացի դրանից Սեպագատի
մօտ էլ կան ուժեղ ուսուցչական գորաբաժիններ:
Սայմաձի են հասել նաև վեց հազար հո-
գի թնդանօթներով: Գնեբալ Շտակի-
բերգի գործը, որ լուսնիսի սկզբին կրու-
վում էր Հաֆանգօր շրջանում Եսպօ-
նացիների դէմ, արագ շարժումներով փո-
թորակից գիշերին հեռացաւ իրան հայա-
ծող եւպոնական երկու գորաբաժիններից
դէպի հիւսիս: Եւ միայն նրա գործի մի
մասը ենթարկվեց եւպոնացիների յար-
ձակմանը Սիւեանից դէպի արևմուտք

կան կուրտուրայի հոսանքին: Այս հանգաման-
քի պատճառը նախ Տիբէտի աշխարհաբարկան
գիւրքն է, որի բարձրաւանդակը գետեղված է
ասիական ցամաքի մէջ, իսկ երկրորդը այն է,
որ բուն ժողովուրդը ֆանտաստիկական նա-
խապաշարմունք է տածում դէպի այլազգի-
ները:

Ըստ հնդկական առասպելաբանական աշ-
խարհայեցողութեան, երկրագունդը անագին
ծաղիկի ձև ունի, որը լողում է ովկիանոսի
ալիքներում: Հորջը դասաւորված ծաղիկաթե-
թերի—ասիական թերակղզիների և տափա-
րակների մէջ—վնէ կերպով բարձրանում է
այդ ծաղիկի բոլորէնը—Մերու սրբազան լեռը:
Այդ լեռը բարձր հանճարների և անմահ ա-
ստուածների մենաստանն է, որի պատերը
թանկագին քարերից և մետաղներից են շին-
ված: Լեռան գագաթի վրա, որտեղից աշխար-
հի ամենամեծ գետերն են հոսում, փռված են
անասման դաշտեր զրախտի գեղեցկութեամբ,
որոնք ամեն կողմից շրջապատված են ձիւնա-
պատ գագաթներից հիւսված պսակներով:

Հիմալայի հսկայական պատի մէջ շատ քիչ
դիւրամատչելի անցքեր կան 5000 մետր բարձ-
րութեան վրա, և այդ անցքերը շատ հեշտու-
թեամբ կարելի է պաշտպանել: Մինչև վերջին
համարիս թէ անկարելի էր համարվում եւ-
րօպացու համար: Արեւմուտքից Տիբէտը նոյն-
պէս լաճանվում է Չինաստանից բարձր և
վայրենի լեռներով, որոնցից սկիզբն են առ-
նում գետերը և հարաւ-արեւմտեան Ասիայի
մեծ գետերը:

Հիւսիս-արեւմուտքից, հիւսիսից և հիւսիս-
արեւելքից Տիբէտի լեռնահարթը Կուեն-Լուն
անագին լեռնաշղթայով է զօտեկրվում: Այն
ժամանակ, երբ Հիմալայները շատ խոր ձորե-
րով են անջատված և երևան են հանում մի
շարք բարձր առանձին գագաթների, Կուեն-

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Խոշոր դէպքերի առաջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻ-
ԹԻՒՆ. Բագուի հայոց Մարգարեական ընկե-
րութեան ընդհանուր ժողովը. Նամակ Ար-
մենակից. Նամակ Խմբագրութեան. Նամակ
խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Բաղադրա-
կան հետախույզ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Տիբէտական արշաւանքը:

ԽՈՇՈՐ ԳԵՊԵՐԻ ԱՌԱՋ

«Մշակի» երեկվայ համարում տպված
հեռագիրը հարորդեց, որ գնեբալ Կուրօ-
պատկինի անագին գործին մօտեցել են
Օկուի և Կուրօկիի գործերը և որ սպաս-
վում են խոշոր դէպքեր: Զօրաշարժները
կատարվում են Գայչօուի, Պայչէնի,
Սիւեանի և Սէնիւչէնի մէջ ընկած ըն-
դարձակ տարածութեան վրա: Արտաւա-
ժանեան այն հազարազրույթներէն, որ
բաղել է «Бирж. В.» լրագիրը, երե-
ւում է, որ Պայչէնի մօտ, ուր կենտ-
րօնանում են ուսուցչ գործերը, պատ-
րաստութիւններ են տեսնվում ուսուցչ
կողմից յարձակում գործելու եւպոնական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԻԲԵՏԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԱՌԻԹՈՎ

Անգլիական արշաւանքը Տիբէտ մտնելով,
սպանում է նուաճել սրբազան Լհասայն,
դալայ-լամայի *) մայրաքաղաքը: Պատմական
օրէնքները քաղաքակրթութեան ուղիները միշտ
արեւնհոսութեամբ են հարթել: Կարմիր տա-
ռերով է արձանագրված շատ ազգերի ներկայ
բարօրութիւնը. դժբաղաբար նոյն տառերով
մարդկութիւնը պիտի կատարէ իր տարբա-
կան պարտաճանաչութիւնը: Այսպէս է եղել
միշտ, այսպէս կը լինի և միշտ: Անգլիան
ձգտում է քաղաքակրթի մի նախնական ազ-
գութիւն. կասկած չը կայ, որ նա կը կրթէ,
բայց ցաւալի իրողութիւնը այն է, որ այդ
կրթութիւնը պիտի անցնէ դիակների վրայով,
որ չէ համապատասխանում ժամանակակից
բարոյագէտների վարդապետութեանը:

Տիբէտը Չինաստանի հարաւ-արեւելեան
մասն է բնութւն: Արեւելքից և հիւսիս-արեւելքից
նա սահմանակցվում է չինական Իւն-Նան,
Սի-Չուան և Կուլու նոր շրջանների հետ,
հիւսիս-արեւմուտքից—Արեւմտեան Թուրքեստա-
նի հետ և հարաւ-արեւմուտքից—Հնդկաստանի
հետ: Երկրի տարածութիւնը մօտաւորապէս
1,200,000 քառակուսի կիլոմէտր է (1,123,200
քառակուսի վերստ), երկու և կէսից մինչև երեք
միլիօն ազգաբնակչութեամբ:

Ասիական պիտութիւններից Տիբէտը միակն
է, որ կարողացել է պահպանել իր առանձնա-
ցած դրութիւնը,—մատչելի չը լինել եւրօպա-
ն *) Դալայ մօնղոլական խօսք է և նշանակում է մեծ.
Լամա—տիբէտական խօսք է, որ նշանակում է ծայրա-
գոյն: Դալայ-լամա տիտղոսը կրում է Տիբէտի թագա-
ւորը, որը երկրի թէ հոգեւոր և թէ մարմնաւոր պետն է:
Ծ. Հ.

չութեան լուրջ և մանրամասն կերպով մտա-
ծել խնդրի այդ կողմի մասին և իր դիտողու-
թիւնները հաղորդել ընդհանուր ժողովին:

Ստատիստ

ՆԱՄԱԿ ԱՐՄԵՆԱՍԿԻՅ
(Դրամ)

Մայիսի 27-ին

Մի քանի օր առաջ Պերեկովից սանիտարա-
կան կոմիտեի էր եկել Արմենակ: Բժիշկը
խաղաղանիկ օգնականի հետ շրջում էր քա-
ղաքի խանութները, կրպակները և քննութիւն
կատարում, թէ առողջապահական տեսակետից
ինչ վնասի մէջ է: Թէ ինչ հետեւանքի հա-
սաւ կոմիտեին՝ մենք չիմացանք, սակայն ա-
ռիթը ներկայանալով՝ ուզում ենք երկու խօսք
ասել քաղաքի առողջապահութեան մասին:
Արմենակը համարվում է Պերեկովից գաւառա-
կան քաղաքի արուարձանը, բայց ինչպէս գը-
րել եմ արդէն (1903, «Մշակ» № 208) համա-
րեա բոլոր վարչական հաստատութիւններն ու
գաղութները գտնվում են Արմենակում՝ սակայն
Պերեկովից անունով է, ինչպէս և ամենից գըր-
ելու էր—քաղաքային վարչութիւնը: Բայց
ցուցնով պիտի ասենք, որ առողջապահութեան
—մարդկային կողմից մեր քաղաքը շատ կո-
րած գիւղերից էլ յետ է մնացել: Թուով շատ
քիչ են այն մագաղանները, որոնց մարքու-
թիւնը քիչ-շատ աչքի է ընկնում. իսկ մնա-
ցած թէ մասվաճառների, թէ մանրավաճառ-
ների խանութները և թէ սրճարաններն ու
գինեւաները մարդկային կողմից մի-մի աղ-
բանոցներ են, որոնց յաճախորդները գլխա-
ւորապէս թաթարներն ու ցիգաններն են, որոնք
յայտնի են իրանց անմաքրասիրտութեամբ: Ա-
պացույց այն բանին, որ շատ խանութներ ուղ-
ղակի դիւրեւանոցներ են—ճարպիկ խանութ-
պաններից շատերը, երբ իմացան բժշկի գալը՝
փակեցին խանութներն ու անյայտացան:

Իսկ քաղաքի փողոցները ու հրապարակները
անմաքրութիւնները ուղղակի պատուէ չեն բե-
րում քաղաքային վարչութեան: Ամեն կիրակի
և մեծ տօն օրերը այստեղ քաղաք-շուկայի
հոռուութիւն է լինում: Մտաւայ գիւղերից հա-
րիւրաւոր գիւղացիներ կարգերով քաղաք են
գալիս՝ իրանց բարիքները ծախելու, ի հարկէ,
դրա համար որոշ տուրք վճարելով քաղաքին,
բայց շատ անգամ նրանց անասունների աղբը
օրերով ու շաբաթներով ստուշ է րը տալում,
մինչև որ քաղաքի մշակները կը բարեհաճեն
«մաքրել», երբ արդէն աղբի մեծ մասը աղ-
քատ կիներն արդէն հաւաքած են լինում՝ ա-
րաւ պատրաստուել համար:

Քաղաքում ոչ մի սալայատակ փողոց չը
կայ: Տները բակերն իրանց անմաքրութեամբ
առաջնակարգ քրքանակի արժանի են: Քաղաք
ունի հայոց թաղում մի հատ փողոցի բուլվար,
որը շինել ու քաղաքին են նուիրել Արեւմա-
գեան եղբայրները, որպէս զի երեխաները տեղ
ունենան խաղալու, թէև երեխաներից աւելի
հասակաւորներն են օգտվում նրանից. բայց
քաղաքը իր կողմից մի չնչին հակողութիւն
անգամ չունի նրա վրա: Նատարանները չար
տղաները սոււաղում են մարդկային կեղտով,
իսկ ծառերը գրկում ճիւղերից ու տերեւներից:
Անշարժիչ է մի քիչ լուրջ ուշադրութիւն
դարձնել քաղաքի բնակատեղիային գրու-
թեան վրա: Գոնէ քաղաքն ինքն օրինակ
գաւառա՞ր իր հրապարակները մաքուր պահելով:

Արմենակում մի հատ իրական չորագահան
պօքսիմաղան կայ, մի հատ էլ արական երեք-
պահան քաղաքային դպրոց, որտեղ բաւական
թուով հայ օրիորդներ ու աշակերտներ են սո-
վորում, բայց իրանց կրօնի մասին բաց է ի
բաց ոչինչ չը գիտեն, որովհետև չէ աւանդ-
վում: Ինչպէս լսել եմ, ժամանակին քանի ան-
գամ գրնում է եղել հայերին՝ հոգ տանելու
այդ մասին, բայց ոչ որ աւելորդ զիջացաւանք
յանձն չէ առել: Ծեղկի հայ քահանայն ազատ
ժամանակ խիստ շատ ունի, ցանկալի կը լի-
նէր, որ նա յանձն առնէր թէկուզ ձրիապէս
պարագիւրու իր ծխերի գաւակները հետ, գէթ
շաբաթը մի անգամ: Առհասարակ ամեն տեղ և
մանաւանդ Ղրիմում, ինչ չարիքներ են առաջ
գալիս կրօնից բոլորովին անտեղեակ լինելուց՝
մեր նոր սերնդի գլխին, միթէ լաւ յայտնի
չեն 29 տարի քահանայութիւն անող մեր տէր
հօրը:

Սաչ. Տէր-Ենօքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, յունիսի 15-ին
«Մշակ» այսօրվայ համարում կարճացի, որ երգիչ
Կոստանեանի իրերը կառքի ետեւից կտրել տարել են:

Ի միեկտեղութիւն մեր երգչի, ասենք, որ այդպիսի
յախճատութեան գործ միայն իրեր չէ—առանձնապէս
վերջին ժամանակներ շատ յաճախ են պատահում այդ-
պիսի վերջնականութիւնը: Այսպէս՝ մի չորս-հինգ
օր առաջ, Ախալցխայից Բորժոմ գալիս, նոյնպէս կառ-
քի ետեւից, գիշերը կտրեցին—տարան իմ մօտ 80—90
րուրի արժողութիւն ունեցող կապուց:

Ինձ թւում է, որ իրերը կառքերի ետեւից կտրում են
եթէ ոչ սովորաբար, գոնէ առնուազն սակա՞յ ոչ առանց
իրանց, կառապանների գաղաւթի մասնակցութեան:
Կառապաններն վերջնական տեսակի տուժումից փոքր
ի շատէ ապահով դարձնելու համար անհրաժեշտ է,
որ կառապանները վարչութիւնները խտրաբանելով լի-
նեն կառապանութիւնը և գործութիւնը շատ ճարպիկու-
թեամբ իրար հետ միացնեն: Կառապանների վերաբեր-
մամբ: Ամենագլխաւորը պէտք է պահանջել, որ իրերը
կառքերի ետեւում կապվեն աւելի խնամքով: Այժմ ի-
րերը ամրացվում են միմիայն վուշէ թուկերով: Ինձ
թւում է, որ այդ թուկերը կարելի է փոխարինել մե-
տաղեայ շղթաներով: Թողնելով իրերը կառքերի ետե-
ւում ամրացնելու իմ առաջարկած պատահական ձևերը
նպատակ է այսու առաջարկել, ուր հարկն է, որ լաւ
հոգատարութիւն տարուի՝ յաճախ շատ չքաւոր կառա-
պանների իրերը կառքերի վրա ապահով ամրացնելու
մասին:

Գ. Արեւիկան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Ստաւրօպոլ, յունիսի 5-ին
Կարգադէր «Մշակ» էջերում մի երկու տեղից գրած
թղթակցութիւններ, որոնց մէջ նկարագրում են վերջին
ժամանակներս առաջ եկած խաչագողների մասին: Մենք
ևս բազմիցս ընկել ենք այդ խաչագողների թակարդը:
Այդ խաչագողները գալով տեղիս առաջին պարտն են
համարում այցելութեան գնալ քահանային և անպիսի
ողորմելի և սիրտ կտրատող խօսքերով են նկարագրում
իրանց ցուրտը, որ մարդ անկարող է բացատրական պա-
տարան տալ: Շարքի չէ անցնում, որ երկու երեք
մարդ չը գալ: Այդ մարդիկ նախօրոք տեղեկանում են,
թէ օտար քաղաքներում ուղբեր են այս կամ այն մար-
դու մտերիմները և ապա գալիս են և նրանց անունից
զանազան նպատակներով համար նպատակ խնդրում:

Անշուշտ Նոր-Նախիջևանի Պօղոս Մօջայեանց
ազգանունով մէկը, շահագործելով հանգուցեալ Լեոն
վարդապետ Մօջայեանցի անունը, իրան անուանելով
նրա հարազատ եղբայրը, կամենում է հանդիմանութիւն
բանալ հանգուցեալ վարդապետի գերեզմանաքանի հա-
մար և իր խաչագողութիւնը կատարել անելու համար,
ինձանից մի վկայական է խնդրում: Ի հարկէ ես հրա-
ժարվում եմ վկայական տալուց, բայց վերջը ինձանից՝
վերադարձնելու պայմանով, մի քանի րուրի կորզելով
հետնում է անհետ:

Երեկ եկաւ մօտ «Մշակ» մէջ Գարեգին քահանայ
Բաղդասարեանցի նկարագրած Նախիջևանց աղջիկը,
որը բացի պակի վկայականից, ցոյց տուցէ նաև իր
երեք որդիներանց մտերիքական վկայականները, ինչդե-
րով մտերիքականների վրա աւելացնել «Մարութիւ-
ն» անունը: Կարգադէր «Մշակ» 114 համարը նրա մօտ,
այլալուծ վայր ի վերջ պատահաններ էր տալիս և
ապա խոտովանելով յայտնեց, որ ստիպված էր այդ-
պէս անել, որովհետև զաւակներին պէտք է կրթութիւն
տալ: Խօսելուց ինչպէս երեքս, Կերչ էլ է եղել: Նախ
քան «Մշակ» վերադառնալ համարը կարգադր, ցոյց տուցէ
ինձ Գարեգին քահանայի դրած նամակը պ. Զամա-
կեանցին: Յոյց տալով վերադառնալ քահանայի պատկերը
ասաց, թէ տանելու է ամենայն հայոց Կաթողիկոսին
և այլն: Երկար հարց ու փորձից նա իրար խառնեց մի
քանի քահանաներին, ինչպէս եկաւ իրենց օգուտը: Տէր-
Գեորգ Զաքարեանցին, Արմաւիրի Գեորգ քահանայ
Սէֆեհեանցին, և Թիֆլիսի կուսանաց անպատիւ քա-
հանային և այլն յայտնեցին, որ այդ բոլորը արել է
նրանց խորհուրդներով: Ի հարկէ, հաւատալ չէր կա-
րել: Բարեբաղ համարեցի յորդորական խօսքերով հա-
մոզել հեռանալ տեղից և ձևող վերցնել խաչագողու-
թիւնից:

Մէկ շաբաթ առաջ եկաւ տեղիս մի երեւոտաբար
ուղղակի գիւմից Կարապետ քահանային և նպատակ խնդ-
րեց յայտնելու, որ Ղլարացի է, յայտնի Թանդուխանե-
րից: Կարապետ քահանայն յայտնելով վերջին ժամա-
նակներս տեղի ունեցող խաչագողութիւնների մասին,
պահանջեց վկայական նրա ով լինելու մասին, բայց
բացատրական պատասխան տուցաւ: Պարոնը չէ ու-
նենում վկայական: Քահանայն նրան ուղղորդում է հենց
այդ ժամանակները Ղլարացի տեղի եկած Երուսաղէմա-
կի տիկնոջ մօտ, յայտնելով, որ նրանից վկայական
ներկայացնելուց յետոյ կարելի կը լինէ՞օգնել: Նա
գրում է և այլ և չէ գալիս: Չը մոռանում ինչեւ, որ
նախ քան քահանային ներկայանալը, հայ վարսավորի
մօտ խոզիկ տուած է լինում իր չէկ մօրուրը:
Հեռանալուց յետոյ նրա արտաքինը, համեմատելով
գիւստանալու Կորին վարդապետի նկարագրած կեցող
Տրիփոն վարդապետի հետ, համոզվում ենք, որ հենց
կեցող վարդապետն է եղել, քանի որ հանած և հաղած աշ-
խարհականի տարազ:

Օրինակներ անթիւ են և իսկապէս այժմ ումը հա-
ւատալ և որոշմութիւն տալ չը գիտենք:

Սահակ քահանայ Տէր-Յովհաննիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՍ

Ներկայում Կովկասի քաղաքներում բան-
տարիկալները բանտերին գատարաններ տար-
վում են ոտով, իսկ հիւանդները՝ կառքով: Այժմ
խնդրի է յարուցված, որ Անդրկովկասի գլխա-
ւոր քաղաքներում—Թիֆլիսում, Բաքուի մէջ,
Բաթումում և Բուրժայիսում մտցնեն առանձին
տեսակի բանտային փակ կառքեր, որոնցով
տարվին թէ առողջ, թէ հիւանդ բանտարիկալ-
ները: Դրանով փախչելու գէպերն էլ կը քա-

նան, հասարակութիւնն էլ կաղապով շղթաների
գնդգնդոցներից և այլ անախորժ տեսարան-
ներից:

Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի կոյ-
րերի հոգաբարձութեան կովկասեան բաժինը
մեզ խնդրում է յայտնել հասարակութեան հե-
տեւալ հաշիւը: 1094 թի մայիսի 1-ին հոգա-
բարձութիւնն ունէր իր գանձարանում 12,976
ր. 46 կ.: Մայիսի ընթացքում եկամուտ եղել
է 13,22 ր. 83 կ.—ընդամենը՝ 14,299 ր. 29
կ.: Նոյն ամսում ծախսվել է 2,233 ր. 60 կ.,
այնպէս որ յունիսի 1-ին գանձարանում կար
12,065 ր. 69 կ.: Այդ գումարը պահվում է
խնայողական արկղում և պետական, առեւտրա-
կան և այլ բանկերում: Հոգաբարձութեան ա-
կանաբուժական հիւանդանոցում 1904 թի
մայիսի ընթացքում եղել են 593 նոր հիւանդներ
կամ հնեի հետ միասին եղել են 3933 այցե-
լութիւններ. նոյն ժամանակամիջոցում արված
են 212 օպերացիաներ:

Հարանգ երկաթուղային կայարանի մօտե-
րը, Թիֆլիսի և Աղսթափայի միջև, 1899 թին
եկան 196 հոգի ուսուցիչականներ, որ կաղմ-
ված էին 44 ծուխից: Դրանք հիմնեցին Նօթօ-
սեանտին հոգ: Առաջին տարին գաղթականները
համարեն բոլորն էլ շերտ ու տեղում բնակե-
ցին, բայց յետոյ այդ հիւանդութիւնը դադա-
րեց: Անցեալ տարի այդտեղ սաստիկ անձրե-
ներ եկան, յետոյ էլ չափազանց տաքեր արին:
Առաջացան ֆուստիկա ճահիճներ ու շոգիներ,
և հիւանդութիւնը նորից անգին չափեր ար-
ուաւ: Ամեն տեսակ բժշկական ու առողջապա-
հական միջոցներ գործադրվեցին, բայց հի-
ւանդութիւնը նորից սպառնում է գլուխ բարձ-
րացնել: Այնտեղ հիմնված է մշտական բժշկա-
կան կայարան և մի ֆելդշեր կին է դրված
այնտեղ:

Ուսուսիրդների խումբը, որը շարունակ
ներկայացուցներ է տալիս Հաւաքարում պ.
Մուրաչկոյի թատրոնում, այս օրերս ունեցաւ
մեծ կորուստ յանձնի Պօկրովսկու, որը խմբի
ղեկավարն էր համարվում: Հանգուցեալ Պօկ-
րովսկի ամսին 13-ին գինովանալով, գնում է
գէպի երկաթուղու գիծը գրանդու, ուր և
հանկուտ պէս նստում է հանգստանալու,
սակայն շուտով ընկնւ տանում է և մնում է
ընկած գծի վրա: Մի քանի րօպէից յետոյ
ապրանքատար գնացը անցնելով, ջախջախում
է և սպանում նրան: Մօտով անցնողները ան-
կարող են լինում փրկել մահից, այնքան ա-
րագ է կատարվում այս գէպը:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել
է քաղաքային զեղատունը կապալով տալ վեց
տարով ներկայ կապալառու պ. Յովհաննէ-
սեանին համաձայն վերջինիս խնդրի: Կառ-
րեկան 4000 րուրով և բացի դրանից նա
պարտաւոր է ամեն տարի 650 րուրու դե-
ղատան իրեր աւելացնել և բաց թողնել քա-
ղաքին 3000 րուրու զեղատան իրեր, եթէ
վերջինս կը կամենայ վարձի փոխարէն իրեր
վերցնել: Որովհետև պ. կապալառուն անյար-
մար է գտնում ներկայ զեղատան տեղը և
խնդրում է տեղափոխելու իրաւունք, այդ
պատճառով վարչութիւնը կը միջնորդէ ուր
հարկն է դրա համար: Ամսին 14-ին քաղա-
քային խորհուրդը հաստատել է վարչութեան
վճիռը:

Թիֆլիսի քաղաքային անդրի գահիճի տե-
ղեկատուից երևում է, որ մինչև յունիսի 15-ը
ծախված իրերից մուտք է եղել 20,759 րուրի
62 կօպ., քաղաքի օգուտն մուտք է եղել 4 ր.
90 կօպէլ:

Ամսին 14-ին Թիֆլիսի քաղաքային խոր-
հուրդը վճեց 1715 րուրի 40 կօպէլ իրեր
վարձատրութիւն տալ շուկայի ոստիկանու-
թեան ծառայողներին:

Ներքին գործերի միջնադրութեան պարտա-
ւորեցնել է պատշաճաւոր վարչութիւններին, որ
Անդրկովկաս և Անդրկասպեան երկրի գաղթի
ցանկացող ուսուցիչականները նախապատու-
թիւն տան արժատական ուսուցիչականներին
և յետոյ միայն հերձվածողներին և նրանցից էլ
միմիայն այն աղանդաւորներին, որոնց գոյու-
թիւնը պաշտօնապէս ճանաչված է պետութեան
մէջ:

ԱՍՈԱՐԱՐԻՅ մեզ գրում են. «Մօտ երկու
շաբաթ առաջ լուր տարածվեց, որ Ասխաբադի

բնակիչ շամախեցի հարուստ Կ. Մարգարեան-
ցը, որը գործով Կուշկա է եղել գնացած, այլ
ևս չէ երևում: Կայծակի արագութեամբ տա-
րածված այդ լուրը յուսահատութեան մէջ է
գցում նրա ընտանիքին և բարեկամներին,
որոնք և շտապում են Կուշկա: Ոստիկանու-
թեան ձեռնարկած խուզարկութիւնները վեր-
ջապէս պարզում են, որ սարսափելի ոճրա-
գործութիւն է կատարվել: Մարգարեանցին
մայիսի 6-ին չարագործները պարանով խեղ-
դում են և թաղում մերձակայ ստացարանում
վաղօրօք պատրաստած մօտ 7 արշին խորու-
թեամբ փոսի մէջ: Այդ ոճրագործութիւնը ուշ
է իմացվում, որովհետև հանգուցեալը, գործե-
րի պատճառով, ապրելիս է եղել Կուշկայից
մօտ երկու վերստ հեռու: Երկար ժամանակ
հողի տակ ծածկված մնալուց յետոյ, վերջա-
պէս 21 օր անցած կարողանում են դիակը
գտնել և բերել Ասխաբադ թաղիլու: Խոշ է
եղել այդ սպանութեան պատճառը, դեռ ևս
որոշ չէ երևում, սակայն նրա մօտ ծառայող-
ներից 7 թէ 8 հոգի, որոնց վրա կամեաւծում
են, արդէն ձերբակալված են»:

ԱՍՈԱՐԱՐԻՅ մեզ գրում են. «Սիւվել են
անտանելի շոքերը, ունեւորները փախչում են
ամառանոցները, իսկ չունեւորները նրանց ե-
րանի տալով՝ միեկտեղվում»:

ԲԱՐՈՒՐԻՅ մեզ գրում են. «Այս տարի սո-
վորական տարիներից ամառանոց գնացողներ
թիւը շատ քիչ է. իսկ եթէ կան գնացողներ,
այն էլ գնում են շրջակայ գաւառական բա-
ղաքներն ու գիւղերը: Կրիզիսից յետոյ պա-
տերազմը Բագուի պակասը լրացրեց: Տեղա-
յին դրամատուները պատերազմից յետոյ շատ
քիչ մարդկանց մուրհակներն են ընդունում,
իսկ Բագուն կենդանի է միմիայն մուրհակի
առևտրով: Եղանակները մինչև մայիսի 20-ը
գարնանային էին, իսկ այժմ կատարեալ ա-
մառնային են: Երեխաների մէջ տարածված է
փորձարիւր հիւանդութիւնը, Կենսական միջեր-
ների բաւական թանգութիւն է զգացվում այս
տարի. ոչխարի միսը 15 կօպէկով է ծախվում.
քաղաքային վարչութեան նշանակած սակա-
գինը գոյուցիւր ևս միայն պաշտօնական
շրջանում»:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈՒՅ մեզ գրում են. «Մայիս
ամսում Արգինա գիւղում անդի ունեցաւ գիւ-
ղական մեծ կռիւ: Գոլցինսո ուսուցիչականների
հետ, հաւաքվել էին երկու կողմից էլ մեծ բազ-
մութիւն: Գէսօրից յետոյ էր, մօտ ժամի 3-ը,
հրացանի քանի չափ ձայնը լսվեցին, որ
արձակում էին միմեանց վրա մի քանի սափէն
հեռաւորութիւնից. բարեբաղդաբար մարդկային
գոն չեղաւ, միայն երկու մարդ փոքր վիրա-
ւորվել էին գնդակից: Այս վերջին անգամը
չէ, որ Արգինայի թուրքերը առիթ են տալիս
ընդհարուսներ իրան հարեանների հետ: Շար-
ժառիթը եղել էր այն, որ թիւրքերը իրանց
անասունները թողել էին ուսանելի սահմանը
անցնելու, ապա առաջին պատահած ուստին
ծեծել և հրացանը խել էին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՍԻՆ ԾՈՒՐՔԻ

Ռուսաց զօրքեր առաջ են արձաւում: Անգ-
լիական թղթակիցները ուղարկած տեղեկու-
թիւններից երևում է, որ գերեզմալ Կուրօպաու-
կինի գլխաւոր ոյժերի մի քանի մասերը սկսել
են առաջ արշաւել: Լօնդօնի լրագիրները ցոյց
են տալիս այն աշողութիւնը, որ ունեցան
ուսանելը, որոնք արշաւեցին արևմտեց Կու-
րօկի գլխաւոր դիրքերի վրա, Ֆինիստանէն
մօտ, Կլամպոնում շարունակվող կռիւները և
Կուրօկի բանակի հետ ունեցած ընդհարում-
ների սաստկանալը համարում են Լօնդօնում
վճռական գործողութիւնների սկիզբ: (T. A.)
Արևմտեղի և յամաւ կղիւ: «Daily Mail»
լրագրին հեռագրում են Նիւ-Զուանից, որ
Գալլիօնից գէպի հարաւ շարունակվում է մի
յամաւ և արևմտեղի ճակատամարտ: Վաֆա-
գուի ճակատամարտի ժամանակ մօտ 2000
ուսանել վիրաւորվեցին և սպանվեցին: Դրանց
մէջ կան 5 աւագ օֆիցերներ: Սպանվածները
թաղվեցին գինեւորական պատուհներով վա-
ֆանգուի մօտ: (Рыск. Вѣд.)
Ռուսները եւսմնով գործում են Գլխաւոր
Լօնդօնից հաղորդում են, թէ «Standard» լրագ-
րին հեռագրում են եապօնական գլխաւոր բա-
նակատեղից, որ ուսանելը շարունակում են
եռանդով գործել հիւսիսում:

ստեղծական մի զօրեղ զօրախումբ յարձակվեց հապօնական զինքի վրա խօսքիչէնի մօտ: Յամառ ընդդիմադրութիւնից յետոյ հապօնացիները ստիպվեցին նահանջել: «Daily Mail»-ի թղթակիցը հետագրում է Ֆինիստանցէնից, որ ռուսները երկուշաբթի յարձակվեցին Շիտուռ-չէնի վրա, որ գտնվում է Ֆինիստանցէնից դէպի հիւսիս-արեւելք: Եւրոպացիները ցրվեցին և նշանաւոր կորուստներ կրեցին: (Вѣст. Вѣст.)

Ընդհարումը մօտավոր է: Չը նայելով հակառակին լուրերին, որոնք գալիս են պատերազմի բեմից, մի բան ճիշտ է երևում, այն, որ քաղէ առ քաղէ պէտք է սպասել վճռական ճակատամարտի: Այդ ճակատամարտի տեղը մօտավորապէս արդէն որոշվում է—Լեւոգորուսեան թերակղզու հիւսիս-արեւմտեան կողմը: Այդ թերակղզու «Journal» լրագիրը գրում է. «Բազմաթիւ նշանները ցոյց են տալիս, որ խոշոր զէպքեր պէտք է կատարվեն Լեւոգորուսեան թերակղզու արևմտեան կողմում, Սիւլչէնից դէպի հիւսիս և Գայլժօուից դէպի հարաւ: Եւրոպական բանակը վճռական արշաւումն է սկսում: Կարծում են, որ գնեցելով Օկուս թողն է Պօրտ-Արտուրի առաջ մի աննշան զօրախումբ, իսկ իր զօրքի գլխաւոր մասը քշել է դէպի հիւսիս, ուր նրան աջակցել է միանալ գնեցելով Գուրօլի մի զինվորային հետ: Այդպիսով, նրա տրամադրութեան ներքոյ է գտնվում 80—90,000 հոգուց բաղկացած մի բանակ: Միւս կողմից հաղորդում են, որ Գայլժօուի առաջ երեւցել են հապօնական երեք պատերազմական նաւեր: Այդ պայմաններում անհրաժեշտ է ենթադրել, որ միայն Ռուսաստանից նոր զօրախումբերի գալը կարող է էապէս փոխել դրութիւնը: Մենք յոյս ունենք, որ դժուարութիւնները կը յաղթահարվեն և աշխարհութիւն շուտով կտացվի»: (НОВОСТИ)

Ինչպես են խօսում իրանց մասին հապօնացիները: Աշտուրիները, մանաւանդ անակնկալ աշտուրիները, շուտ է տալիս մարդի գլուխը: Վերջին աշտուրիները սաստիկ հպարտացրել են հապօնացիներին և «Ծագող արեգակի» երկիրը սկսել է պարծնալ իրանով: Տօկիոյում, միտինգներում, ոգևորված և ինքնագոգնական ձանձուր հարստանում, այսպէս, օրինակ, ինչպէս հաղորդում է «Frankfurter Zeitung» լրագիրը, յունիսի 3-ին կայացած միտինգում ճառախօսները խօսում էին պատերազմի պատճառների մասին և միտինգը լանգեց այն որոշման, թէ հապօնայի կոչումն է—պաշտպանել կուլտուրան ռուսների դէմ (!): Այսպէս յայտարարվեց, թէ հապօնայի ամենալաւ հոգն է, ուր քրիստոնէական դաւանութիւնները կարող են միանալ և մի ընդհանուր եկեղեցի կազմել: Սակայն աւելի հետաքրքրականը դեռ այդ չէ, այլ մի Ուկրաինացի արտասանած ձառք, որի մէջ ապացուցանում էր, թէ զեղին վտանգը—իսկապէս գոյութիւն ունի, բայց զեղին վտանգի հեղինակները ոչ թէ հապօնացիներն են, այլ ռուսները: Ճառախօսը անուանեց ռուսներին մտքօրէն: Ռուսները, նրա կարծիքով, կանգնեցնում են հրոսակների սերունդներին: Եւ զարմանալի է, որ այդ ինքնագոգնութիւնները արտասանվում են հապօնական իշխանութիւնների թոյլտուութեամբ և ներկայութեամբ: (НОВОСТИ)

Եւրոպայի մէջ ընդհանրապէս անակնկալ է ձեռք բերում: Չը նայելով հապօնական կառավարութեան պաշտօնական հերքման, «Berl. Tageblatt» լրագիրը շարունակում է հաւատաւել, որ հապօնայի ձեռք է բերել ամերիկական ընդօրինակ նաւակը՝ «Պրոտէկտոր» անունով և բացի դրանից՝ նրա պատուէրով Ամերիկայում այժմ շինվում են նոյն տիպի 4 ընդօրինակ նաւակներ:

ԲԱՆԱԳԱՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Русскія Вѣдомости» լրագիրը իր յունիսի 11-ի համարի մի առաջնորդող յօդուածով, խօսում է Մակեդոնիայում և Հայաստանում կատարվող զէպքերի մասին:

«Եւրոպայի վճռողապէս, ասում է լրագիրը, հրաժարվում է իր ձեռքն անել վերահսկողութիւնը թիւրքիայի ներքին գործերի վրա, մի բան, որ ամենանպատակաւոր մար ելքը կը լինէր այն անտանելի դրութիւնից, որի մէջ գտնվում են թիւրքիայի բրիտանիայ և նոյն իսկ մուսուլման հպատակները: Ուրեմն, այդ հարցը պէտք է փոխարինել որ և է ուրիշ բանով, որովհետեւ թողնել թիւրքական վարչութիւնը այն ձեռք, որով նա այժմ կազմակերպված է, այդ կը նշանակէ մասնել թիւրքիայի բրիտանիաներին յաջորդական ոչնչնալը: Եթէ զրա համար դեռ ապացոյցներ

են պէտք, վերջին զէպքերը հէնց այդ տեսակի փաստերով շատ ճորհ են: Սատուում արդէն երկու ամիս է կոտորած է կատարվում: Սարերը ներկված են արեւով. կոտորված են մի բանի հազար մարդ: Կանայք բռնաբարվում են և տանջանքների ենթարկվում: Երեւի ընկածներին բարբարոսաբար այսպիսով են: Նրանց տանում են Մուշ, ուր, կենտրոնացրված բանակներում նրանք փթում են ցեղի և հիւանդութիւնների մէջ: Սատուից մինչև կուլտուրական երկիրները հեռու է և այդտեղ կատարվող սարսափների լուրը շատ ուշ է հասնում: Եւրոպայի կանխելին, ուստի չը կայ մէկը, որ կանխելիցէ ջարդերը, որովհետեւ հիւպատոսները անգոր են փշրելու թիւրքական իշխանութիւնների կրաւորական դժմադրութիւնը»:

Հաստատելով, որ Եւրոպայի մինչև այսօր ոչ մի բան չէ արել ջարդերը կանգնեցնելու, կամ եթէ միջամտում է, շատ ուշ, երբ արդէն ջարդերը կատարված են լինում, համեմատելով Հայաստանի վիճակը Մակեդոնիայի հետ, որը նոյնպէս սոսկալի վիճակի մէջ է գտնվում, ռուս լրագիրը ասում է, որ երկու երկիրներում ևս սպաւում է համբերութիւնը, ստիպված է լինում, դիմել ի հարկէ, ապրաւարութեան: Ոչ մակեդոնացին, ոչ հայը չեն կարող այլ ևս ապրել շարունակ այն երկիրը, որի մէջ արդէն հարկահանք կը կողոպտէ նրա վարուցանքը, դատարը կաշառք կը պահանջէ, ժանդարմները կը քնն տուարը և այլ այսպիսի անպակաս հարստանալութիւններ: Եւ Մակեդոնիան, և Հայաստանը կամենում են ապրել մարդավայելի կերպով և նրանք իրաւունք ունեն այդ ցանկանալու: Մակեդոնիայի գործերը ներկայումս մի քիչ աւելի հանգարտ կերպարանք ունեն, բայց Հայաստանը քանի է դառնութեան մտրուր, նրա ազատների բաժակը լցվել է: Այդ է պատճառը, երբեք կանգնում է լրագիրը, որ ժամանակ է մի ելք գտնել քրիստոնէաների այդ աղէտալի վիճակին վերջ դնելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԵՐ

—Ինչպէս յայտնի է, անցեալ տարի Նօրեւան խաղաղութեան մրցանակը 200,000 ֆրանկ, ստացաւ պ. Բանդալ Կրեմլէր, խաղաղասիրութեան յայտնի առաքեալը: Արդ, Բենդալ խաղաղութեան միջազգային բիւրօն յայտնում է, որ պ. Կրեմլէր իր ստացած մրցանակի 1/8 մասը, այն է 175,000 ֆրանկը նուիրել է անգլիական խաղաղութեան ընկերութեան, այն յոյսով, որ կը գտնվին ուրիշ նուիրատուներ, որոնք այդ գումարը կը հասցնեն իրանց նուէրներով 625,000 ֆրանկի, որպէս զի ընկերութիւնը կըրողանայ ամեն տարի նրա տոկոսները՝ 25,000 ֆրանկ՝ ծախել խաղաղութեան պրօպագանդայի վրա:

—«Frank. Zeit.» լրագիրը հետազոտում են Կ. Պօլսից, որ Բ. Գուրը ուղարկել է արտասանման համար իր ներկայացուցիչներին մի շրջաբանական, որով աշխատում է հայ յեղափոխականների վրա գցել ամբողջովին Սատուում և Մուշում կատարված հայերի կոտորածի պատասխանատուութիւնը: Բիթլիյից եկած մատնաւոր լուրերը յայտնում են, որ Մուշում հաստատված է զինուորական դատարան մեղաւոր հայերին դատելու համար: Սարերը փախած հայերը սկսում են վերադառնալ իրանց տեղերը: (P. A.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ

14 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գնեցելով Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թ. յունիսի 13-ից. «Փաստեր կան կարծելու, որ հակառակորդի բաւական մեծ ուժեր վանդելին կայաւանից ծովեցին դէպի լեռները և շարժվում են հիւսիս-արեւելք՝ դէպի Չապաւլին լեռնանցքը: Յունիսի 12-ին մեր շարժական խմբերը դիտում էին հապօնական զօրքերի հիւսիսային ճանապարհով Միւսանից Գայլժօու, Տուկուտուից դէպի Պանձաբէյ և դէպի Ուլայտալին կողմած լեռնանցքն սկսած շարժումը: Յունիսի 12-ին հակառակորդն սկսեց առաջ խաղաղ Մէլիւժանից Լեւոսեանի գլխաւոր ճանապարհի ուղղութիւնով, նոյնպէս և դէպի Մօզուլիւնեան լեռնանցքը Տուկուտուից դէպի Տաֆանդուի վրայով, Սիւլչէնից 18 վերստ հիւսիս-արեւմուտը: Լեւոսեանեան գլխաւոր ճանապարհով գնում էր մէկ բաւալիւն, նրանից արեւելք՝ ծախել գետի հովտով—մի գունդ հետեւ և երկու էսկադրօն, և արեւմուտքով—լեռների վրայով—մէկ բաւալիւն և երկու էսկադրօն: Լեւոսեանի գլխաւոր ճանապարհին թշնամու ա-

ռաջխաղացութիւնն սկզբում խանգարվում էր հրացանաձիգների երկու վաշտով, որոնք կազմում էին այդտեղի պահապան խմբերը և ուրոնք դանդաղ յետ էին քաշվում դէպի հիւսիս: Իսկ յետոյ նրանց օգնութեան եկան կրկին երկու վաշտ: Ճաշից յետոյ ժամը 2½-ի մօտերը թշնամին գրաւեց Տուկուտու, իսկ մեր հրացանաձիգները երկկոյեան դէմ յետ քաշվեցին դէպի Պանդէօու, Սիւլչէնից 35 վերստ դէպի հիւսիս: Մեր կորուստներն են. վերաւոր-վել է պօրուչիկ Օգլորիւկը և հինգ զինուոր: Մի և նոյն օրը հապօնական մի բաւալիւնաչափ հետեւեց խումբ, որ Տուկուտուից գնում էր Մօզուլիւնեան լեռնանցքի ճանապարհով, Տաֆանդուի մօտ յետ մղեց մեր պահապան 2 վաշտ հրացանաձիգներին. որոնք նախ դանդաղ յետ քաշվեցին դէպի Ուլայտալին, իսկ յետոյ դէպի Կէլեհապուճաւ: Այդ շրջ-թայում վաշտի հրամանատար կապիտան Եանչուկովսկին վերաւորվեց: Կարմիր լաշի բժիշկ Բիշկովի արած վերակապութիւնը վերջնաւալուց յետոյ, երբ Եանչուկովսկին տանում էին պատգարակի վրա, հապօնացիները, թեկ կողմն անցնելով, իրանց հարուածներն ուղղեցին դէպի պատգարակիները: Երեք պատգարակահիրներ վերաւորվեցին, և Եանչուկովսկին, բժիշկ Բիշկովը և երեք վերաւոր զինուոր-պատգարակահիրներ մնացին թշնամու ձեռքին: Բացի դրանից՝ մեր կողմից սպանվեցին երկու հրացանաձիգներ և վերաւորվեցին պօրուչիկ Սեր-պուլովսկիսիւնը ու 13 զինուոր: Յունիսի լոյս 13-ի զիշիւրը հակառակորդը, մի գնաչափ հետեւեց ինքն և մի գնաչափ ձիաւորներով, մնաց Տուկուտուի մօտ: Յունիսի 13-ի առաւօտեան ժամը 9-ին թշնամու մի բաւալիւն-նաչափ զօրախումբն առաջ խաղաց Սիւսանից դէպի Պանդէօու ճանապարհով Մօզուժից դէպի վանձիապուճաւ, կէսօրի մօտերը առաջնորդաւ բաւալիւնի ետեւից երեւցին թշնամու ուրիշ հետեւի մասերը լեռնային թնդանթներով: Յունիսի 13-ի առաւօտեան ժամը 7-ից թշնամին վերսկսեց առաջխաղացութիւնը Տուկուտուից դէպի Պանդէօու: Գլխաւոր ճանապարհով և Մօզուլիւնեան լեռնանցքի ճանապարհով Ուլայտալին վրայով և Մաղեանպուճից գնացող լեռնային ճանապարհով, որը շրջում անցնում է Մօզուլիւնեան լեռնանցքի ալ թեկ միւս կողմը: Լեւոսեանի գլխաւոր ճանապարհով նկատվում էր մէկ հետեւի գնդից ոչ պակաս զօրաբաժնի առաջխաղացութիւնը թնդանթներով, որոնք առաւօտեան ժամը 9-ի մօտերը հասան մինչև Տիւրեւալիզա, Տուկուտուից 3 վերստ դէպի հիւսիս: Այդ շարժման մասին յետագայ տեղեկութիւններ դեռ չեն ստացվել:—Յունիսի 9-ին Սյնամբին մօտերը մեր զօրամասի արած հետախուզութեան անհրաժանութիւնները հետեւեալն են, առաւօտեան 10½ ժամին մեր ձիաւոր առաջապահ խումբը յետ քնեց հակառակորդին առաջաւոր դիրքի ամրացած փոսերից, կէս օրվայ ժամը 1 և 40 րօպէին թըշնամու ալ թեկ դէմ դիրք բռնեցին մեր չորս ձիաւոր լեռնային թնդանթները, որ խիստ յաջող հարուածում էին հապօնացիների յետ քաշվող շղթան և խտացած մասերը, որոնք չափազանց ուժեղ, բայց համարեա անհետեւանք հրացանի կրակ էին անում: Նոյն ժամանակը վրա հասած մեր հետեւապարքը ուղղվեց այսպէս: 4 վաշտ հակառակորդի դիրքի ալ թեկ դէմ և մէկ վաշտ մեր ալ թեկ ապահովելու համար, որի դէմ դուրս եկան հապօնական երկու վաշտեր: Մեր զօրքի ետեւ-դաւն ճնշման տակ թշնամին 3—4 վերստ յետ էր նահանջում, մաքրելով ամրացած փոսերի շարքերը: Կէսօրից յետոյ ժամը 4-ին, թշնամու գլխաւոր դիրքին մօտեանայի մեր կազակների ձիաւոր բաւալիւնն ենթարկվեց 18 լեռնային թնդանթների կենտրոնացած կրակին և մի քանի քաղէում կորցրեց 8 կազակ սպանված և 20 վերաւոր, որոնց մէջ 5 հոգի թնդանթ ուղղողներն: Այն ժամանակ ծառայողներին ստիպված եղան թաղանթ մօտակայ բարէ շէնքի մէջ: Կազակների բաւալիւնայից աւելի դէպի ալ մեր երկու վաշտերը շարունակում էին նեղել հակառակորդին, և գլխաւոր դիրքի վրա ամրացած փոսերի մէջ երեւան հանվեցին հապօնական հետեւապարքի բաւական նշանաւոր թիւ՝ մօտ 3 գունդ: Պարզելով հակառակորդի ուժերը, զօրաբաժնի հրամանատարը վճռեց դադարեցնել առաջխաղացութիւնը և հրամայեց լեռնային-ձիաւոր բաւալիւնային չը փոխել դիրքերը, որպէս զի նրան զուր կորուստներ չենթարկէ: Ռոյով հետ և մեր թնդանթները կրակը դադարեցրին, թշնամին երկկոյեան ժամը 6-ին իր ալ թեկ կողմից առաջ խաղացրեց մէկ բաւալիւն: Մեր հրացանաձիգները երկու վաշտ և

ձիերից իշած մէկ հարկերեւակը, շտաբ-բօս-միտար Ցեղերեւելի դեկավարութեամբ, մըշտական միահամուռ հրաձգութեամբ այդ բաւալիւնին լիապէս փախցրեց, պատճառելով նշանաւոր կորուստներ: Որովհետեւ մեր ձիաւոր բաւալիւնայի դիրքի վրա ոչ միայն շարքերի, այլ և առանձին անձերի երեւոյն առաւօտեան կրակը, զրա համար զօրաբաժնի հրամանատարը ճակատամարտը ձգձգեց մինչև մութն ընկնելը, որի քողի տակ մեր թնդանթները դուրս տարվեցին՝ սկզբում ձեռքերի վրա: Հակառակորդի հետեւապարքի անվճռական առաջխաղացութիւնը մթնութեան մէջ կանգ առաւ մեր հրացանաձիգների կրակի պատճառով: Գործը վերջացաւ երկկոյեան ժամը 9-ին: Մեր կորուստներն են. թեթեւ վիրաւորված է գլխաւոր շտաբի օֆիցէր փոխգնդապետ Րօմէյկօ-Գուրիօն, փոխ-գնդապետ Եանչուկովսկի, եւստով Նիւրոսովը, փոխ-հատու Նիկոլայիւկը, պօրուչիկ Նիկոլայիւկը և պօղպօրուչիկ Շիլովսկին, թեթեւ վիրաւորվել է փոխ-հատու Նօֆիմանը. զինուորներ սպանված են—25 և վիրաւորված 53, որոնցից ծանր վէրքեր ունեն միայն 7-ը: Հակառակորդի կորուստները նշանաւոր են:

—Գլխաւոր շտաբի հաղորդածը. «Արտասանման համար լրագիրներում և Տօկիօյի ստացված հեռագիրներում յիշվում է, որ վաֆանդուի կուլում հապօնացիները զրօշակ են գնդի առեղ. վերաւորական մինիստրի այդ առեղ-թով արած հարցին, փոխարքայի պատերազմական շտաբի գլխաւոր յունիսի 13-ին տեղեկացրեց, որ գերի է առնվել ոչ թէ զրօշակ, այլ այն նշանը, որ պատերազմական ծառայութեան կանոնադրութիւնը որոշել է գնդի հրամանատարի տեղը պատերազմում և գրի-րելու վայրը նշանակելու համար»:

Փոխարքայի ամենահպատակ հեռագիրը 1904 թ. յունիսի 14-ից. «Պօրտ-Արտուրից ծովապետի երկրորդ օգնական Վիտեբսկոյ յունիսի 7-ին և Գրիգորովից յունիսի 10-ին ստացված զեկուցումների համաձայն, ևսկաւ-դրայի ծովը դուրս գալուց առաջ տեղի են ունեցել թշնամու ակաւները ոչնչացնելու երկարատեւ և դժուարին աշխատանքները, որ կատարել են տրաւներով բոլոր նաւերը, նաւահանգստի կառուցները և յատակից հող դուրս հանող նաւերի կրաւանը: Յունիսի լոյս 10-ի դիրքերը Պօրտ Արտուրի մօտ ճակատամարտ տեղի ունեցած մեր և հապօնացիների ակահանաւերի միջև: Մեզանից թեթեւ վիրաւորվել են II կարգի կապիտան Նիլսէիւկը և լէյտնանտ Սիւրիսով 3-րդ: Ցեղերից ժամը 2-ին մեր էսկադրան ծովը դուրս եկաւ. այդ ժամանակ հօրիզոնում կանգնած էին հապօնական 11 նաւ և 22 ակահանաւ»:

ՏՕԿԻՕ: Գնեցելով Օկուս զեկուցանում է, որ հապօնացիները Տէլլիուտի կուլում կորցրել են սպանված՝ 217 մարդ, որոնց մէջ 7 օֆիցէր և վիրաւոր՝ 964, որոնց մէջ 43 օֆիցէր:

ՊԵՏՐՈՊՈՒՆՈՎՍԿ: Յունիսի 14-ին Իրկուտսկից եկաւ անցաւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը:

ԽՍԻՎՈՎ: Գիւղացիական օրէնսդրութեան վերաբնութեան խորհուրդը նահանգապետի նախագահութեամբ առաջին խիստում կանոնաւոր գտաւ դիւղական ժողովներից բաժանել գիւղացիների հողերից օգտվելու գործերը, զրա համար որոշելով յատուկ հողային ժողովներ: Գիւղամասերի ընկերութիւնների մէջ վճռված է ներմուծել նախկին հարկատուներից անշարժ կալուած ունեցող անձեր: Ցանկալի են համարել գիւղամասերի դատարանների վերացումը կամ, յամենայն դէպս, նրանց իրաւատութիւնը կրճատելը:

ՄՕՍԿՎԱ: Նովեմբր կողմից հասցրած հարուածը երեւց, որ խոր չէ. պատուած է փոքր թաղանթը, բայց առանց աղիքների ֆլուսի, մէջքին հասցրած երկրորդ հարուածը գոյացրել է միայն մակերեւութական վէրք:

ԿԻՆ: Վիլնիւ կայսրը և էդուարդ թագաւորը «Գերմանի» նաւարանում գնացին «Բրաունշվայգ» պատերազմական նաւը և այցելեցին կայսերական նաւարանը և պարկը:

ՏԱՆԺԷՐ: Ամերիկական երեք կրէյսեր զբնւում են Գրեքալտար, այնտեղից էլ Գէնուա միւս 3-ը մնում են Տանժէրում՝ ամերիկական կառավարութեան պահանջները հաստատելու համար:

15 յունիսի

ԼՕՆԴՕՆ, յունիսի 14-ին (Բէյտէր): Վաղեւ-փօստօհեան էսկադրայի բռնած «Ալլանտոն» շոգենաւի տէրը իր նաւապետից հեռագիր ստացաւ, որ մագսանինգ նաւեր բռնող դատարանի վճիռով շոգենաւն իր բռնում կեն-

